38. ՃՆՃՂՈՒ ՕՏԱՑ ՓՈՒՇ

Կէղնի, չէղնի ճնճուղ մի կէղնի։

Էդ ճնճուղ կէրթա վըր փշին կը նստի, փուշ մի կը շըքվի ոտ։

Կէրթա պառվու մի կըսե.—Պառա՛վ, պառա՛վ, արի իմ օտաց փուշն հան տար։

Պառավ գիգա կը հանե տանե, թունդիր կը վառե էդ փշով, յոթ հաց կը թխե։

Օր մի ճնճուղ գիգա կըսե.—Պառա՛վ, յան իմ փուշ, յան իմ յոթ հացն կիտաս, առնիմ էրթամ։

Պառավ կըսե.—Ի՞նչ փուշ է, ի՞նչ յոթ հաց է. ես յոթ հաց ե՞ք իմ թխե քու փըշով, օր էկեր իս գուզիս։

Ճնճուղն կըսե.—Ես չըմ ավտընա. յան իմ փուշ կիտաս, յան յոթ հաց, թը չէ, դու իմ ձեռքեն չպրծնաս։

Պառավ կըսե.—Կանի էրթամ քու փուշ բերիմ իտամ առ ու դնա։

Ճնճուղ կըսե.—Ես չըմ ճանչնա, այնի զիմ փուշ պտի բերես, հ՚որի՞ վառեցիր։

Պառվու ճար կը կտրի, կելնի յոթ հաց կիտա, ճնճուղ կառնե կէրթա։

Կառնե կէրթա, կը տեսնա օր հովիվ մը նստեր է թիթրեն բըրդեր է կաթի մեջ ու կուտե։

Կըսե.—Հովի՛վ, հովի՛վ, հ՚որի՞ն իս թիթրեն բրթի կաթի մեջ, մարդ սկի կաթի մեջ թիթրեն կը բրթե՞, ա՛ռ իգա յոթ հաց, հ՚ելի ման մը թաժա կաթ կթե, բի բրթե մեջ, կի՛ր։

Հովիվն կըսե.—Ես սուլրեր եմ։

Ճնճուղ շատ կը զորե, հովիվ կը տեսնա օր, յախա չկոնա ազատե ճնճղու ձեռեն, առավ, կթեց աման մի թաժա կաթ բերեց, հաց բրթեց մեջ, կերավ։ Ճնճուղ լե թողեց գնաց։

Ճնճուղ թողեց գնաց, քանի մը օր մնաց, դարձավ էկավ։

Ըսեց.—Հովի՛վ, յան իմ յոթ հաց կիտաս, յան յոթ հատ հոկեճ կիտաս, առնիմ էրթամ։

Հովվի ճար կը կտրի, կըսե.—Կանի էրթամ գեղի մեջեն յոթ հատ հաց առնիմ հ'իգամ, իտամ քզիկ առ ու գնա։

Կըսե.—Ես իգա հ'ըմալ բան չըմ ճանչնա, այնան յան իմ յոթ հացն կիտաս, յան յոթ հոկեճ, թե չէ՝ քզնե վազ չըմ հ'իգա։

Հովվի ճար կը կտրի, կելնի յոթ հատ աղեկ հոկեճ կը ջոկե, կիտա ճնճղու հ'առեջ, կառնե կէրթա։

Կէրթա, շատ ու քիչ կէրթա, կը տեսնա օր հարսնիք մի կէնեն, դրած են շան քոթոթներ պղնձի մեջ կէփեն, օր հարսնիքի կերակուլ պատրաստեն։

Կըսե.—Ինչի՞ դրեր եք քոթոթներ պղնձի մեջ կէփեք, մարդ սկի շան քոթոթ կուտե՞, առեք իմ օչխըրտեք էփեք, տվեք հարսնքվորներուն, թըղ ուտեն։

Ճար ուրանց կը կտրի, կը տեսնան օր ճնճղու ձեռնեն յախա չըկոնան ազատեն, կառնեն օչխրներ կը մորթեն ուտեն։ Ճնճուղ կը թողե կէրթա։

Ճնճուղ կէրթա քենի մը օր կը մնա, դառնա գիգա։ Գիգա կը բռնե հարսնքվորներու յախեն, կըսե.—Յան իմ յոթ օչխար կիտաք, յան՝ ձեր հարս։

Հարսի տերեր կըսին.—Կանի հ'ելնինք էրթանք գեղի մեջեն յոթ հատ օչխար առնինկ հ'իգանք, իտանք քզիկ, առ ու գնա։

Կըսե.—Չէ՛, ես իգա հըմալ բան չըմ դինա, յան իմ յոթ օչխար կիտաք, յան ձեր հարս։

Հարսնարի ճար կը կտրի, կելնին կիտան հարս ճնճղուն, կառնե կէրթա։

Կէրթա, կը տեսնի օր հովիվ մի նստեր է բըլուր կը փչե։

Կըսե.—Հովիվ, առ էդա հարս քզի, տուր քու բըլուր ընծիկ։

Հովիվ կըսե.—Հարս ընծիկ պետք չէ, ես բըլուր կը փչեմ հ'ըմնօր, իմ բըլուր չըմ իտա։

Ճնճուղ կըսե.—Պըտի իտաս։

Հովվի ճար կը կտրի, հարս կառնե ուրին, կիտա բըլուրն ճնճղուն կառնե կէրթա։

Կատնե բըլուրն կէրթա. կը նստի ու կը սազե փչել։
Կը փչե ու կըսե.

Տո՛ւ, տո՛ւ, տո՛ւ, մեկ փուշ,
Մեկ փուշից յոթ հաց,
Յոթ հացից յոթ օչխար,
Յոթ օչխարից հարս մի,
Մեկ հարսից փող մի։

Ու կը զարկե գետին կը կոտրե, ինք լե կը թռնի կէրթա։